ԳԼՈՒԽ ՄԼԶ.

Ամենայն ոք ստացեալ պաշտօն որում աստիճանի որ իցէ՝ ոչ ոք կարող լիցի հանել և կամ իջուցանել նմայ 'ի պաշտամանէ, բայց գործ մեղաց ձեռաց իւրօք, և մահ կենաց, և լրումն ժամանակի պաշտօնի իւրեանց։

ԳԼՈՒԽ ՄԼԷ.

Ամենայն իջուցեալ ոք 'ի աստիճանէ պաշտօնի ով որ իցէ, և կամ անկեցեալ 'ի պաշտօնէ, ոչ ոք վերստին նմայ նորոգել կարէ, բայց տունն հայոց տանուտէրամբ։

ԳԼՈՒԽ ՄԼԸ.

Ամենայն թուղթ ընդունելութեան երդման պաշտօնի և այլ, գրեցեալ լինի Օրինակօք որում բացատրի վասն բանին յայնմիկ, և թուղթն այն անցանէ մէջ դաֆտարին տանն հայոց և 'ի յապարանն դատաւորին, և 'ի ծածուկ խորհրդարանի նախարարին որում քաղաքի որ ձեռնադրեցաւ։

ԳԼՈՒԽ ՄԼԹ.

Ամենայն պաշտօնեայ որում աստիճանի և պաշտօնի որ կոչեցեալ իցէ որ 'ի վեր քան թէ տասնապետ որում ժամանակի և որում տեղի